ԿԱՐԾԻՔ

Գայանե Հովհաննեսի Ավետիսյանի՝ «Բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկան հիմնական դպրոցում» վերտառությամբ ատենախոսության մասին (ԺԳ 00.02.- «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (հայոց լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման):

Բազմիմաստ բառերի ուսումնասիրման հիմնախնդիրը հիմնական դպրոցում ուսումնասիրվող հաղորդակցական-գործառական և կոմպետենտային գործընթացներից կարևորագույնն է: Այն մասնավորապես արդիական է մատաղ սերնդի ազգային ինքնագիտակցության և արժեհամակարգի ձևավորման տեսանկյունից:

Բազմիմաստ բառերի գործառական և ոճական առանձնահատկությունների իմացությունը նպաստում է ոչ միայն հիմնական դպրոցի սովորողների կողմից հայերենի խոսքի մասերի խորությամբ և գիտակցական ուսումնասիրմանը, նրանց բառապաշարի հարստացմանը, այլև սովորողների խոսքի զարգացմանը, մասնագիտական բառախմբերի յուրացմանը, դրանց գիտական իմաստների ըմբռնմանն ու հաղորդակցական կարողությունների ձևավորմանը:

Ի հակադրություն նշված հիմնախնդրի կարևորությանը՝ ՀՀ հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչներում, ծրագրերում և մայրենիի դասագրքերում, ցավոք, նախատեսված չեն բազմիմաստ բառերի ուսումնասիրության խնդիրները:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև կրթական ծրագրերում և չափորոշիչներում քննարկվող հիմնախնդրի մեթոդական անբավարար մշակվածությամբ, որի բացն էլ լրացնում է դիտարկվող ատենախոսության բովանդակությունը:

Ատենախոս Գ. Ավետիսյանն իր գիտական ուսումնասիրության շրջանակներում քննել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ լեզվաբանական, հոգելեզվաբանական և մանկավարժամեթոդական հարուստ գրականություն, ձեռք բերված տեղեկույթը դիտարկել է ոչ միայն իբրև գիտական աղբյուր, այլև մի շարք ուսումնամեթոդական սկզբունքներ է լրամշակել, արդիականացրել և կիրառել է իր կողմից առաջադրված մեթոդական համակարգում՝ որպես գիտամեթոդական հիմք:

Ատենախոսը բազմիմաստ բառերի ուսումնասիրման տեսանկյունից բծախնդրորեն ուսումնասիրել է ՀՀ հիմնական դպրոցի հայոց լեզվի չափորոշիչները,

ծրագրերն ու դասագրքերը, բացահայտել է նրանց տեղն ու դերը նշված փաստաթղթերում, որոշել է առկա բացթողումներն ու կատարել է կառուցողական վերլուծություն:

Ատենախոս Գ. Ավետիսյանը գիտական բարեխղճությամբ ուսումնասիրել է բազմիմաստ բառերի գործառական և իմաստաբանական հատկանիշները, կատարել է տիպաբանական վերլուծություն և առանձնացրել այն հիմնական ուղղությունները, որոնք կարևորել է որպես հիմնական դպրոցում ուսումնասիրող նյութ, հիմնավորել է ուսումնասիրության անհրաժեշտությունը, որոշել ուսումնական նյութի սահմանները, մշակել և հիմնական դպրոցի միջին օղակում փորձարկել է բազմիմաստ բառերի ուսումնասիրման մեթոդները, նրանց յուրացման արդյունավետությանը նպաստող լեզվական վարժությունների համակարգն ու մեթոդական ցուցումների արդիականությունն ու կիրառելիությունը:

Ատենախոսության արդյունքների հիմնավորվածությունն ակնհայտ է ոչ միայն ատենախոսի իրականացրած փորձարարական գործընթացների արդյունքների վերլուծության և տվյալների դիտարկման տեսանկյունից, այլև ատենախոսի՝ որպես պրակտիկ ուսուցչի ներդրման, ծագած հիմնախնդիրները գիտական տեսանկյունից վերլուծման և մանկավարժամեթոդական երաշխավորությունների կիրառելիության առումներով:

Ատենախոսությունը շարադրված է բացառիկ գրագետ հայերենով, գիտական լեզվով և հարուստ գիտագործնական փորձարարության հիման վրա:

Կարևորում ենք նշել մի քանի դիտարկում, որոնք, մեր կարծիքով, ատենախոսությունը կդարձներ առավել կատարյալ.

1. Աշխատանքում չափազանց շատ են ըստ խոսքի մասերի ներկայացված բազմիմաստ բառերի օրինակները և նրանց գիտակցական յուրացման նպատակով առաջարկվող վարժությունները: Դրանք, անշուշտ, անհրաժեշտություն են, սակայն այդ ամենը կարելի էր տալ որպես հավելված՝ շարադրանքը դարձնելով առավել կուռ:

2. Ատենախոսն ընդարձակ դեր է հատկացրել խոսքիմասային տարարժեք բառերի բազմիմաստության լեզվաբանական մեկնաբանությանն ու դրանց ուսումնասիրման մեթոդիկային: Կարծում ենք՝ այս մասին կարելի էր պարզապես հպանցիկ ներկայացնել (իբրև ծանոթություն), քանի որ լեզվական այդ իրողությունը հիմնականում ուսումնասիրվում է բուհական համակարգում:

3. Ինչպես նշեցինք, ատենախոսության հիմնախնդիրն արդիական է՝ ավելի ընդարձակ ընդգրկումով, և այդ տեսանկյունով էլ իրականացված է ուսումնասիրությունը, ձևակերպված են եզրակացությունները, սակայն ատենախոսության արդիականությունը մեկնաբանված է կատարված աշխատանքին ոչ համարժեք. այն ավելին է, քան շարադրված է այդ խորագրի ներքո:

Նշված դիտարկումները բնավ չեն նսեմացնում պաշտպանության ներկայացված ատենախոսության գիտական արժեքն ու բերած նորությունը:

Ատենախոսի հրապարակած հոդվածները, ինչպես նաև մեթոդական ձեռնարկը բխում են հետազոտվող հիմնախնդրի դրույթներից, իսկ ատենախոսության եզրակացությունները համահունչ են այն խնդիրներին, որոնք նախատեսվել են եղել լուծելու հետազոտական աշխատանքի ընթացքում:

Եզրակացություն

Գայանե Հովհաննեսի Ավետիսյանի՝ «Բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկան հիմնական դպրոցում» խորագրով ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական հետազոտություն է: Այն համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող կանոնակարգի 7-րդ կետի պահանջները, բավարարում է *ԺԳ 00.02.*- «Դաստիարակության և ուսուցման մեթոդիկա» (հայոց լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջները, ուստի նրա հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ (Ջ.Հ. Գյուլամիրյան)

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ջ.Հ. Գյուլամիրյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ գիտ. քարտուղար՝ (Մ. Իսպիրյան)

02.12.2020